

# ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

Մի կարելութ գիր

Des heiligen Irenäus Schrift zum Erweise der apostolischen Verkündigung in armenischer Version entdeckt. Herausgegeben u. ins deutsche übersetzt v. Lic. Dr. Karapet Ter-Mékerttschian u. Lic. Dr. Erwand Ter-Minassiantz mit einem Nachwort u. Anmerkungen v. Adolf Harnack, Leipzig, 1907.

Ս. ԻՐԵՆԻՈՍԻ (ԵՐԱՆՈՍ) Ցոյց առավելական Քարոզութեանն՝ գտնուած հայերէն թարգմանութեամբ։ Հրատարակեցին և թարգմանեցին գերմաներէն Լից. գր. Կարտապետ (լարգապետ) Տ Մկրտչեան և Լից. գր. Երուանդ (լարգապետ) Տ Մինասեան, Աղոփ Հարնակի վերջաբանով և ժամօթութիւններով։ Լայզեր, 1907 թ. գինն է 6 մարկ կամ 2 ը. 80 կ.

Մի կարեւոր գիւտ նշանակեցինք այս գրախօսութեան վերապերը, որովհետեւ իրօք կարեւոր նորութիւնն է ոչ միայն Հայոց եկեղեցու թարգմանական մատենագրութեան, այլ ընդհանուր քրիստոնէութեան համար։ Գրութեան հեղինակն է երկրորդ դարու Երկրորդ կիսում ապրող Լուգդունի կամ Ներկայ Լիոնի նշանաւոր Երէց և առա նոյն համայնքի եպիսկոպոս Խրենիոս։ Նա ծննդեամբ Փոքր Ասիայից էր և առաքեալների հետեւ Պօղիկարապոս Զմիւռնացու աշակերտը։ Ներսէս Գ-ի օրով Կոստանդ կայսեր ուղարկած Հայոց թղթի մէջ առաքեալներին հետեւ եպիսկոպոսների և մատենագիրների շարքում յիշուած է և «Երենիոս Գալլիացի աշակերտ Պատղիկարապոսի յեկեղեցւոցն Լաւողիկեցւոց»։ Եկեղեցու պատմութեան համար նորութիւնն է, որ Խրենիոսը իւր եպիսկոպոսական ձեռնադրութիւնն ստացած լինի Լաւողիկայում, Յայտնութեան մէջ յիշուած Ասիայի եօթեկենկեցիներից մէկը։ Գուցէ գորանով նորա իսկական Հոյրենիքն է ակնարկուած։ Յամենայն գէպս այսքանն անկասկած է, որ նա Փոքր Ասիայից էր և իւր կրթութիւնն ստացել է Բ. դարու առաջին կիսում ծաղկած եկեղեցու նշանաւոր նահատակ և առաքեալների հետեւ Պօղիկարապոս Զմիւռնացու մօտ։ Խրենիոս ինքը առ Ֆլորինոս գրած թղթի մէջ նկարագրում է իւր մանելութեան այն շրջանը, երբ լուռմ էր Պօղիկարապոսին հէնց

նոյն իսկ Ֆլորինոսի հետ։ \* Գիտնականներից ոմանք նրան յոյն են համարում։ ոմանք սեմական։ առաջին կարծիքի ներկայացուցիչների գլխաւոր փաստը նորա անունն է և գրութիւնների լեզուն։ սակայն դրականապէս պնդել չէ կարելի, թէև հաւանական է, որովհետեւ մինչև երկրորդ դարու վերջերը քրիստոնէութեան լեզուն բացառապէս յունարէնն է։ Այն իսկ Գ. գարու սկզբներու մ ապրող ափրիկեցի Տերտուղիանը իւր մի քանի շարագրութիւնները յունարէն է գրել։ Եկեղեցու պատմութեան մէջ Խրենիոս հանդէս է գալիս առաջին անգամ որպէս ներկայացուցիչ Լիոնի խոստովանողների համ վկանների (այդպէս էին կոչւում այն քրիստոնեաները, որոնք հաւատի համար տանջուել կամ բանդարկուել էին), որոնց թուղթը նա տանում է Հռովմի Եկեւթերոս եպիսկոպոսին [177—190]։ Այդ ժամանակ նա գեռ ևս երէց էր, լնչպէս երկումէնւուերիոս Կեսարացու պատմութեան մէջ պահուած ընծայութեան թղթը (Ա. 4)։ Հռովմից մերագառնալուց յետոյ՝ նա ընտրւում է Լիոնի եպիսկոպոս և վարում է այդ պաշտօնը մինչև գարու վերջերը։ Խըսե եպիսկոպոս շատ կենդանի մասնակցութիւն է յոյց տուել եկեղեցին յուղող հարցերի մէջ, յատկապէս զատկի վէճի առթիւ, որ ծագել էր Հռովմի և Փոքր Ասիայի եկեղեցիների մէջ։

Յայց նա առաջնակարգ հաշակ է ստացել իւր մատենագրական գործունեութեան համար։ Տարաբաղդաթար նորա դրուածները մեծ մասով կորել են, մնացել են միայն հատակուարներ այլ և այլ լեզուներով, ի թիւս որոց և հայերէն, որ հրատարակել են Պիտրա և Հարվիլ։ Ամբողջութեամբ մեր ձեռքն է հասել, բայց լատիներէն թարգմանութեամբ միայն, \*\* նորա գլխաւոր երկը Ընդգէմ Հերձուածոց, որի մասին յանախ յիշում է Եւսեբիոս Կեսարացին։ Ընդգէմ Հերձուածոց գրքի բուն վերնագիրն է ՝Էլէնցիօս ռա'անարտրութիւն Շիշ Վէսճանըմոս շնաւաւութիւն և եղծումն ստանուեն գիտութեանն, բաղկացած հինգ գրքերից։ Անհետ կորած շարագրութիւնների մէջ կարեորն էր համարում։ Եւս էպիթետից տօն ՚առօտօնակօն արքայացուուց—Յոյցը առաքելական քարոզութեան՝ թարգմանուած մեր հայրերի կողմից։ Ահա այս երկու երկերից առաջնի ըորըորդ և հինգերորդ գրքերի, իսկ երկրորդի ամբողջական թարգմանութեան գիւտն է հայոց լեզուով, որ մենք կարեոր անուանեցինք։ Գիւտի պա-

\* Եւսեբիոս Կեսարացի Ե. 20.

\*\* Th. Zahm, Irenäus յօդուածի մէջ R.E. 5 յիշում է, որ յունարէն բնագիրը գոյութիւն ունէր ծԶ. եւ Ժ. դարերում, բայց այժմ կորած է։

աիւը ոպատկանում է հարապետ վարդապետ Տ. Մկրտչեանին, որ 1904 թ. Երևանում փոխանորդ եղած ժամանակ, հաթուղիկ եկեղեցու ձեռագիրները զննելիս նկատել է այս գրութիւնները: Այժմ այդ գրութիւններից վերջինը, գերմաներէն թարգմանութեան հետ հրատարակում են Կարապետ և Երուանդ վարդապետաները: Ենթավարակութիւնների համարարանի նշանաւոր ուսուցչապետ Ա. Հարնակ ևս, որ իւր Texte II. Untersuchungen հրատարակութիւնների շարքի մէջ է զետեղել այս գրութիւնը հրատարակիչների համաձայնութիւնն ստանալուց յետոյ, մի վերջաբան է աւելացրել և ծանօթութիւնները: Քրիստոնէական ամբողջ մատենագրութեան մէջ այս գրքի գոյութեան մասին միակ տեղեկութիւնը տալիս է Եւսեբիոս Ե. 26 «Եւ այլ միւս ևս ճառ ընծայեալ Մարկիոնի ուրումն եղօր ի ցուցակութիւն քարոզութեան առաքելոցն»: Սորանից աւելի ուրիշ տեղեկութիւն չկայ. հասկանալի է, թէ ինչպիսի՞ թանկագին պարգև են ընծայում մեր երկու միաւրանակիցները այս հրատարակութեամբ հայոց մատենագրութեան և քրիստոնէական ընդհանուր գիտութեան: Այստեղ չենք կարող զոտել և չարտայայտել մեր խորին վեշտն ու ցաւը, որ այսպիսի մի կարևոր գիւտ, կատարուած Մայո Աթոռի միաւրանների ձեռքով, չի հրատարակուում Ա. Էջմիածնում, որ նորա քարոյական հեղինակութեան և հրոշակին վայել էր, և կաւելացնենք, որ զորա պատճառը հրատարակիչները չեն:

Ա. Եղի, ի՞նչ նշանակութիւն ունի այս գիրքը մեզ համար: Երենիսո այն հայրերից մէկն է, որ շատ պարզ գաղափար է տալիս իւր ժամանակի քրիստոսաբանական հայեացքների և ընդհանուրապէս աստուածաբանութեան մասին: Խոկ նորա կարծիքներն առանձին նշանակութիւն ունին, որպէս մի անձի, որ սնուել է և կրթուել Քրիստոսի անմիջական աշակերտների հետ կապ ունեցող անձանց շրջանում: Քրիստոնէութեան երրորդ սերնդի լաւագոյն ներկայացուցիչն է՝ նա: Ներկայ աշխատութեամբ ոչ միայն պարզուում է այն գաղտնիքը, թէ ի՞նչ է գրել նա վերնագրով միայն մեզ յայտնի երկի մէջ, այլ և շատ մեկն գաղափար ենք ստանում Երենիսոի կրօնական և աստուածաբանական հայեացքների մասին: Արովհետեւ այս գիրքը մի տեսակ հրահանդութիւն է Մարկիանէ անունով մէկն, որ հաւանօքէն գեռ նորավարժ էր: Յայտնի է, որ գաւանաբանական ձեւն ու հաւատալիքները եկեղեցու պատմութեան մէջ մի անգամից չեն յառաջ եկել, այլ հետզհետէ: Աւետարանների և առաքելական թղթերի մէջ չկան այն հանգանակները, որ հաս-

տառել են նիկեոյ, Ա. Պոլսոյ կամ Նվեսոսի ժաղովները։ Այլ նոքա ձեւ և կերպարանք են ստացել կամ թանձրացել են, եթէ կարելի է այսպէս առել, հետզհետէ, նախկին գարերի ընթացքում։ մենք չենք կարող ըմբռնել նոցա էռթիւնն ու ծագման պատմութիւնը, մինչև չժանօթանանք նախընթաց հայեացքների և եղելութիւնների հետ։ Այս տեսակէտով Խրենէսոր եկեղեցու դաւանարանութեան և կըօնականութեան պատմութեան նշանաւոր օգտիներից մէկն է։ Ներկայ գրքով ոչ միայն համամատութեան նիւթ ենք ստանում ստուգելու երկրորդ գարու միւս հեղինակների, ինչպէս Մելիքասի, Հերմասի և նոյն իսկ Խրենիոսի Հերձուածոց գրքից ստացած աւելիկութիւններն ու երջանական հայեացքները, այլ և նորութիւններ, որ միայն այսուղից ենք իմանում։ Այս միակ գիրքն է, որից իմանում ենք, թէ ինչպէս էին հրահանդում երկրորդ գարու եպիսկոպոսները քրիստոնէական հաւատի մէջ քենց հաւատացեալներին։

Յիշենք միայն մի երկու կէտ մեր նախընթաց տողերի մէջ արտայացտած նկատազութիւնները լուսաբանելու համար։ Եկեղեցական պատմութիւնից մեզ յայտնի էր մկրտութեան մի հաւմառուած հանգանակի, որ ծագել է Հոռովմի համայնքի մէջ և դարսու երկրորդ կէտերին։ Այդ հանգանակի էտկան մասերի տարւերը, նոյն իսկ երբեմն բառացի, գտնում ենք այս գրքի մէջ։ Խրենիոս երրորդ և երթներորդ հատուածների մէջ բացատրում է հաւատոյ և մկրտութեան նշանակութիւնը յանուն նըրորդութեան Յայտնի է, որ ն, Կատակրանի մէջ մկրտութեան հանգանակի երկու ձևակերպութիւն ունինք, Պօղոս առաքեալլ Հոռովմ։ Թղթի մէջ Զ. Յ. մկրտութիւնը միայն Յիսուսի անունով է յիշում, իսկ Մատթ. Խ. 19 Նըրորդութեան անունով, որ սակայն աստուածաբաններից ամանց կողմէց ներմուծութիւն է համարուած։ Ահա մի երկրորդ վկայութիւն ևս, որ երկրորդ գարում ընդհանրացած է յանուն երրորդութեան հանգանակը։ Աւելին կատենք 47։ Հատուածի մէջ չօր և Արդու յարաբերութեան և էռթեան բացատրութիւնը, կամ Ս. Հոգու ազգեցութիւնը մարդարէների և առաքեալների վերայ յիշեցնում է Դիլիոյ հանգանակը։

Խրենիոսի հայեացքների վերաբերութեամբ նորութիւն է, որ նա եղինքի եօթ պարունակ է ընդունում Վաղենտիանոսի հետ, որի գէմ մաքառում է Եւր գլխաւոր երկի մէջ։ Աօթն սպարունակների համեմատ էլ քաժանուած են երկնային զօրութիւնները։ Հրեշտակապեանները, որոնք Արդու և Հոգու հետ միասին պարունակութիւն ունենալու մէջ առաջարկութիւն է (9, 10, 11 հ. 5), ընդ-

ո ծուած միաքը նոյնպէս կարեոր է դաւանաբանութեան պատմութեան համար. ինչպէս յայտնի է երեք անձնաւորութեան ենթակայութեան և հաւասարութեան գաղափարները երկար ժամանակ զբաղեցրել են եկեղեցու հայրերին Որիգինէսից ոկտած մինչև նորա վարդապետութեան վերջնական դատապարտութիւնը:

Քրիստոսաբանական կարեոր խնդիրներ են արծարծուած 30, 31, 32 պրակների մէջ. տռաջնում նախագոյն թեառն խընգերը, իսկ վերջինների մէջ մարդեղութեան հնագոյն ձեւակերպութիւններից մէկը: Խոչի խորհուրդն ու նշանակութիւնը բացատրուած է 34, 41, 45, 56 պրակների մէջ: Վերջին պրակների մէջ արտայացառուած է նրենիոսի պարզ և մաքուր կրօնականութիւնը, հրէական և քրիստոնէական կրօնների տարբերութիւնները, սիրոյ բարձր նշանակութիւնը:

Իրենիոսից թէե ունէինք վկայութիւններ Ստեփանոս Խմանտասիրի «Վասն անապահանութեան մարմնոյն ելն» և Սահակ կաթուղիկոսի անունով մնացած զրութիւնների մէջ<sup>\*</sup>, բայց զժուար էր տսել, թէ այդ վկայութիւնները նորա երկերի ամբողջական թարգմանութիւններից են առնուած: Այժմ սոտուգւում է թարգմանութիւն դոյութիւնը և պարզուած, որ վերոշեցեալ վկայութիւնները նոյնանում են Հայերէն թարգմանութեան հետ: Հրատարակիչներն այդ վկայութիւններն ի նկատի ունենալով, յառաջարանի մէջ որոշում են թարգմանութեան ամենից ու շամանակը: Ստեփանոս Խմանտասիր նոյն համարելով և դարու առաջին կիսում՝ ծաղկած նշանաւոր Սիւնեցու հետ, իսկ Սահակ վարդապետ՝ Հայոց կաթուղիկոս և մեծ թարգմանիչը՝ Սահակ Զորավարուեցու, որ ապրում էր և դարու վերջեւին: Սահայն կարծում ենք, որ թէ մէկ և թէ միւս ենթադրութիւնը սխալ է: Ստեփանոս Խմանտասիրը նոյն չէ Սիւնեցու հետ, և հաւանօրէն անվաւերական է այդ գրուածքը, որի հեղինակն ապրում էր մօտաւորապէս և դարու կէսերից մինչև թէ դարու վերջերը: Իսկ Գիրք Թղթոցի գրութեան հեղինակ Սահակ Զորավարուեցին լինել չէ կարող, որովհետեւ օգտաւում է Սիւնեցու թարգմանութիւններից և Գերմանոսին գրած թղթից: Առաջին խնդիրը ապացուցել ենք մեր

\* Առաջինը հրատարակել է Պալուստ Տ. Մկրտչան, Ստեփանոս Խմանտասիր, Վազ բշապատ, 1902: իսկ երկրրդը տպագրուած է Գիրք Թղթոցի մէջ՝ եր. 415:

«Դաւիթ վիելիսովիայ (Հարքացի)» ուսումնասիրութեան մէջ, որ տպագրւում է «Արարատ»-ի մէջ ներկայ համարից, իսկ երկրորդի վերաբերութեամբ խոստանում ենք պարզել առանձին յօդուածով յետագայ համարներից մէկի մէջ, մատենախօսական շրջանից շատ չետանալու համար։ Միայն այժմեանից յայտնենք, որ բացի վերոյիշեալ հեղինակներից նրենիսի նոյն վկայութիւններն ունի և մի երրորդ հեղինակ՝ Տ. Յեսու Խոռոսունեաց եպիսկոպոս կամ Տ. Յուսէփ, որից օդառուել է Ստեփանոս Խմաստասէր։ Այս նկատադրութիւնն անելով հանդերձ անհաւանական չենք համարում, որ թարգմանութիւնը կատարուած լինի հեղինատէրների շրջանում, այսինքն է գարում։ Հայ թարգմանութեան լեզուն այդ շրջանի կնիքն է կրում։ Յունարէնից է թարգմանուած, թէ ասորերէնից, երկուսի համար էլ նշաններ են գտնում հրատարակիչները, բայց այդ խընդիրն առ այժմ թողնում են անորոշ։

Մի ուրիշ կարեոր խնդիր ևս հրատարակիչները շօշափել են յառաջաբանի մէջ։ Արդեօք նոյն թարգմանչի գործն է Ընդդէմ Ներծուածոց վերջին երկու դրբերի և Ցոյցը առաքելաւկան քարոզութեան թարգմանութիւնը և միայն այդքանն է հայերէն թարգմանուած Խընիսից։ Առաջին հարցին պատասխանում են դրական մտքով, աչքի առաջ ունենալով թարգմանութեան լեզուի նմանութիւնը երկու դրբերի մէջ և նրանց ընդհանուր վերնադիրը—Ցոյցը առաքելական քարոզութեան,—որ իսկապէս ներկայ հրատարակութեան ժամանակ, երբ Խընիսի հատակործ հարցին խոստանում են վերադառնալ Խընիսիսի ամբողջ հրատարակութեան ժամանակ, երբ Խընիսի հատակործ հաւաքուած և Ստեփանոս Ռոշքայի (1670—1739) տուածտեղեկութիւններն ու բառարանն ուսումնատիրուած կլինին։ Վերջին հեղինակի՝ Բարսնիսիսից առած՝ տեղեկութեան համեմատ՝ «Հայք ունին զայտոսիկ» (Ըստգնմ Հերծուածոցի հինգ գրքերը) յոյժ ճոխաբար և հայ լեզու յեղեալ», իսկ Հ. Տաշեան, որ իւր Վիեննայի Միիթարեանց Զեռագ. ցուցակի մէջ, եր. 680, մէջ է բերում այս տեղեկութիւնը, աւելացնում է, թէ նոյն Ստեփանոս գործ է ածել վերոյիշեալ գրքի լիակատար օրինակը իւր բառգրքի մէջ։

Ուրախութեամբ սպասելով այս խոստման կատարման, աւելորդ չենք համարում ընթերցողների հետաքրքրութեան համար մատնացոյց անել մի քանի յայտնի հատակստորների վերայ, որ մասամբ հրատարակել են Պիտրա և Հարլիկյ Խընիսիսի այլ և այլ գրուածքներից, իսկ մասամբ ևս միայն ձեռագիր-

ներից են յայտնի: ա) Յլորինոս երէցին ուղղուած Պեր սահարչիչ: —Վասն միապետաւթեան գրութեան հայերէն թարգմանութիւնն առնուած մի վկայութիւնից: բ) Մի հատուած մոնտանական Բլատոսի գէմ գրուած ուր չշնչառու: Վասն հերձուածոց վերնագրով \*+: գ) Վիեն կամ Վեննա քաղաքի (Կարաւային Գալլիայում) Դեմետրիոս սարկաւազին ուղղուած ուր ուշտաւած հօդամասն համարում Յանը Հարէցի (Պ, 460—430, 31) տպած ասորերէն, արտաքերէն և հայերէն պահուած հատուածը \*: զ) Հայերէն թարգմանութեամբ հրատարակել են Հարիլէց (Պ, 464 № 32) և Մարտին ել. 31 Երենիոսի մի քարոզի հատուած, Մատթ. ի. 20 մասին: Զարբանալեան \*\*\* յիշումէ մի ուրիշ հատակոտոր «ի Մատթէոսի մեկնութենէն» ի Խորհուրդ տօնի յարութեան\*: Նատ հետաքրքրական է յատկապէս նոյն Զարբանալեանի յիշած՝ «Երիանոսի յաղագո գնացից Առաքելոցն և բանից հերձուածաղաց» գրութեան ամբողջութիւնը գտնել, որ հաւանօրէն նւ սեբիոսի յիշած և. 20 մեթեակը\* գրութիւնն է ընդգէմ Վաղենուանոսի, կորած: Բոլոր այս հատակոտորները հաւանական են դարձնում, որ Երենիոսի գործերից աւելի են թարգմանուած, քան այժմ յայտնի եղաւ հ. Կարապետի գիւտով:

Գերմաներէն թարգմանութեան մասին այսքանո կասենք, որ սահուն է և ճիշդ, ուրեմն ունի ամեն մի թարգմանութիւնից պահանջուած գլխաւոր յատկութիւնները: Պրով. Հայնակ իւր վերջարանի մէջ յայտնում է, որ ստուգութեան համար յանձնել է հայագէտ գր. Ֆինկին համեմատելու հայերէնի հետ, և վերջինս հաստատել է թարգմանութեան հարազատութիւնն ու գեղեցիութիւնը:

**Դ. Վ. ՅԱՎԱԿԻՒԱՆ**

\* Եւսեբիոս Կեսարացի. Ե. 20.

\*\* RE<sup>5</sup> Irenäus յօդուածը.

\*\*\* Մատթեաղարան հայի. Թարգմանութեանց. Վենետիկ. 1889.